



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17029

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 139-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/85-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱ ՂԱՐԱԳՅՈՂՁՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Գևորգ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Արա Ղարագյոզյանին (արտոնագիր թիվ 2041) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատում է մուտքագրվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև Դատարան կամ Դիմող**) դատավոր Մ.Մարտիրոսյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 27.04.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0101/01/16 քրեական գործի քննության ընթացքում պաշտպան Արա Ղարագյոզյանն առանց դատարանի թույլտվության հեռացել է նիստի դահլիճից, որով ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Որոշմամբ նշվել է, որ թիվ ԵԷԴ/0101/01/16 քրեական գործով 27.04.2017թ. նշանակված դատական նիստի ժամանակ պաշտպանի միջնորդությունների վերաբերյալ մեղադրողի դիրքորոշումը լսելիս ամբաստանյալ Ա. Խանդոյանը խանգարել է դատական նիստի բնականոն ընթացքը, անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ, ինչի պատճառով դատարանն Ա. Խանդոյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ նիստերի դահլիճից հեռացնելը մեկ ժամով: Այնուհետև դատական նիստն ընդմիջվել է 10 րոպե ժամանակով:

Ընդմիջումից հետո դատական նիստը շարունակվել է առանց Ա. Խանդոյանի ներկայության և մեղադրողը շարունակել է հայտնել իր կարծիքը

պաշտպանի միջնորդությունների վերաբերյալ: Մեղադրողի կարծիքը լսելուց հետո պաշտպան Ա. Ղարազյոզյանը հայտարարել է, որ առանց ամբաստանյալի չի կարող շարունակել մասնակցել դատական նիստին, քանի որ իր պաշտպանյալն առարկում է դրա դեմ և իրենց միջև այդպիսի պայմանագիր չի կնքվել: Բացի այդ պաշտպանը գտել է, որ պատշաճ արդարադատություն չի իրականացվում, քանի որ դատախազն առարկում է իր միջնորդությունների դեմ անհիմն կերպով: Այդ պատճառներով ինքը հեռանում է նիստի դահլիճից:

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ, 73-րդ և 314՝-րդ հոդվածները, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետը, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, գտել է, որ Արա Ղարազյոզյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին, անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը թիվ ԵԷԴ/0101/01/16 քրեական գործով 27.04.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Ամբաստանյալ Արարատ Խանդոյանի պաշտպան Արա Ղարազյոզյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պարասխանաբարության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանների պալատ:»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.05.2017թ. թիվ 139-Ա/ԿԳ-17029 որոշմամբ՝ փաստաբան Արա Ղարազյոզյանի (արտոնագիր թիվ 2041) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով

29.05.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողի կողմից ներկայացվել է թիվ ԵԷԴ/0101/01/16 քրեական գործով 27.04.2017թ դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Պատասխանողը ՀՀ փաստաբանների պալատ ներկայացված իր բացատրությամբ նշել է, որ 27.04.2017թ. դատական նիստի ընթացքում որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ իր պաշտպանյալ Ա.Խանդոյանից հանձնարարություն է ունեցել նրան դատական նիստերից հեռացնելու դեպքում չմասնակցել դատական քննությանը: Ինքը դատական նիստը լքել է բացառապես այդ նկատառումներով, ինչն ակնհայտ է նույն օրվա դատական նիստի

ձայնագրառման կրիչից, որը ներկայացրել է բացատրությանը կից, ինչպես նաև բացատրությամբ հղում է կատարել www.youtube.com կայքի «[www.youtube.com /watch?v=11Mluou5eVY](http://www.youtube.com/watch?v=11Mluou5eVY)» հասցեում առկա նույն դատական նիստի տեսագրությանը: Բացատրությանը կից ներկայացրել է նաև «Հանձնարարություն» վերնագրված ձեռագիր փաստաթղթի պատճենը, որով Ա.Խանդոյանը 02.11.2016թ. հանձնարարել է իր պաշտպան Ա.Ղարազյոզյանին իրեն դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում չմասնակցել դատական քննությանը:

Փաստաբան Ա.Ղարազյոզյանը մատնանշել է նաև վստահորդի շահերը բարեխղճորեն պաշտպանելու և պաշտպանյալի շահերին հակասող գործողություններ չկատարելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածներով, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի մի շարք դրույթներով ամրագրված դրույթներ և դրանց հիմքով գտել է, որ դատարանում գործել է բացառապես վստահորդի հանձնարարությունից ելնելով և որևէ խախտում թույլ չի տվել: Փաստաբանը նշել է նաև, որ չի ընդունում դատական սակցիա կիրառելու մասին որոշմամբ նշված այն պատճառաբանությունը, որ ինքը դատական նիստի դահլիճը լքել է այն պատճառով, որ դատախազն անհիմն առարկել է իր միջնորդություններին:

Խորհրդի նիստին ներկայացել է Պատասխանողը և պնդել բացատրությունում ներկայացված փաստարկները:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

29.07.2017թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանը կազմել է եզրակացություն, որի համաձայն կարգապահական վարույթի նախապատրաստման ընթացքում հաստատվել են հետևյալ փաստական հանգամանքները.

- 27.04.2017թ. դատական նիստի ընթացքում Ա.Խանդոյանին դատական նիստերի դահլիճից հեռացնելուց հետո փաստաբան Ա.Ղարազյոզյանը հայտարարել է, որ մինչև իր պաշտպանյալը չվերադառնա դատական նիստերի դահլիճ, ինքը չի կարող իրականացնել նրա պաշտպանությունը և հաշվի առնելով առանց իր ներկայության դատական քննությանը չմասնակցելու Ա.Խանդոյանի հանձնարարությունը, ինքը լքում է դատական նիստերի դահլիճը: Հայտարարել է նաև, որ դատարանում պատշաճ արդարադատություն չի իրականացվում, քանի որ դատախազը խեղաթյուրում է իրականությունը: Այս հայտարարություններից հետո առանց նախազահողի թույլտվության Ա.Ղարազյոզյանը լքել է դատական նիստերի դահլիճը:

31.07.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝

18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Պալատի խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- թիվ ԵԷԴ/0101/01/16 քրեական գործով 27.04.2017թ. նշանակված դատական նիստի ժամանակ դատարանն Ա. Խանդոյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ նիստերի դահլիճից հեռացնելը մեկ ժամով: Այնուհետև դատական նիստն ընդմիջվել է 10 րոպե ժամանակով:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի արձանագրության ձայնագրառման կրիչով:

- Նիստը վերսկսելուց հետո դատավարության մասնակիցները շարունակել են լսել մեղադրողի առարկությունները պաշտպանական կողմի ներկայացրած միջնորդությունների վերաբերյալ: Մեղադրողի ելույթը լսելուց հետո Ա.Խանդոյանի պաշտպան փաստաբան Ա.Ղարազյոզյանը հայտարարել է, որ լքում է դատական նիստերի դահլիճը մինչև իր պաշտպանյալի դատական նիստերի դահլիճ վերադառնալը, քանի որ վերջինս իրեն հանձնարարել է չմասնակցել գործի քննությանը առանց իրեն: Նախագահող դատավոր Մ. Մարտիրոսյանը պարզաբանել է, որ դահլիճից հեռացված ամբաստանյալի պաշտպանի մասնակցությունը պարտադիր է և իր չմասնակցելու դեպքում, կներգրավվի հանրային պաշտպան:

- Մ.Մարտիրոսյանը առաջարկել է ժամանակ տրամադրել պաշտպանին իր պաշտպանյալի հետ հնարավոր հարցերը նիստից դուրս ճշտելու համար, սակայն փաստաբան Ա.Ղարազյոզյանը հրաժարվել է և անտեսելով նախագահողի նախազգուշացումները մինչև ընդմիջում հայտարարելը առանց վերջինիս թույլտվության դուրս է եկել դատական նիստերի դահլիճից:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի արձանագրության ձայնագրառման կրիչով

- 02.11.2016 թվականին Արարատ Խանդոյանը գրավոր հանձնարարություն է տվել փաստաբան Ա.Ղարազյոզյանին, որ վերջինս առանց իրեն դատական նիստերի դահլիճում չկատարի որևէ գործողություն, չմասնակցի դատական նիստերին, իրեն դահլիճից հեռացնելու դեպքում փաստաբանը նույնպես լքի

դատական նիստերի դահլիճը, չմասնակցի որևէ դատավարական գործողության: Փաստաբան Ա.Ղարագյոզյանը ընդունել է նշված հանձնարարությունը:

Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ, «Հանձնարարություն» վերտառությամբ փաստաթղթի պատճենով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 17.08.2017թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/466-17 տեղեկանքի համաձայն Արա Ղարագյոզյանը արտոնագիրը ստացել է 28.11.2015թ.: Արա Ղարագյոզյանի նկատմամբ 2015-2017թթ ժամանակահատվածում հարուցվել է 1 կարգապահական վարույթ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արա Ղարագյոզյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝

«(...)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(...):»:

Նշված կանոններից հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Հատկանշական է, որ նախկինում Պալատի խորհուրդը դատարանի դահլիճն

առանց նախագահողի թույլտվության լքելու փաստաբանի վարքագիծը համարել է Կանոնագրքի դրույթներին հակասող: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան) 16.11.2009թ. թիվ 29/1-Ա որոշմամբ փաստաբան Սեդա Սաֆարյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության, այն բանի համար, որ փաստաբանը **«...խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, նրա արարքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի կանոնադրության պահանջների խախտման հարկանիշներ:»**:

Խորհուրդը նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև 23.11.2012թ. թիվ 22-ԿԳ/1-Ա և 22.02.2013թ. թիվ № 7-ԿԳ/1 Ա որոշումներով:

Այս ընդհանուր մոտեցումից, Պալատի խորհուրդը նախկինում շեղվել է միայն այն դեպքերում, երբ արձանագրել է դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ: Այսպես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան, զեկուցող՝ խորհրդի անդամ Արա Զոհրաբյան) 12.11.2008թ. թիվ 22/11-Ա որոշմամբ փաստաբաններ Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի և Դիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: **Պալատի խորհուրդը նշել է հետևյալը՝ «...Ինչպես կարող է դատավորը կողմերին ուղարկել որոշում, իսկ դրանից մոտ 50 օր անց, երբ համոզվելով, որ ուղարկված որոշումն իր մեջ լուրջ թերություն է պարունակել, հայտարարել, որ իր մոտ այդ նույն ամսաթվով մեկ այլ որոշում էլ կա, սակայն այլ բովանդակությամբ:.. Դատավորի գործողությունների արդյունքում խախտվում են փաստաբանության անկախության և օրինապահության սկզբունքները: Փաստաբանը ստիպված է լինում դահլիճը լքելու միջոցով առարկել դատավորի ոչ օրինական գործողությունների դեմ:»**: Պալատի խորհուրդը հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը՝ **«Պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ փաստաբանները իրավունք չունեն առանց նախագահող դատավորի թույլտվության լքելու դատական նիստերի դահլիճը և պարտավոր են հարգանք դրսևորել դատավորի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ: Այս մոտեցումից շեղումը կարող է առաջացնել կարգապահական պարասխանատվություն, բացառությամբ, երբ առկա կլինեն ծանրակշիռ պարճառներ:»**:

Պալատի խորհուրդը փաստաբան Արա Ղարազյոզյանի՝ դահլիճը լքելու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Ըստ հաստատված փաստերի, փաստաբան Արա Ղարազյոզյանն այդպիսի վարքագիծ է դրսևորել, քանի որ իր վստահորդ Արարատ Խանդոյանը գրավոր հանձնարարություն է տվել փաստաբան Ա. Ղարազյոզյանին, որ վերջինս առանց իրեն դատական նիստերի դահլիճում չկատարի որևէ գործողություն, չմասնակցի դատական նիստերին, իրեն դահլիճից հեռացնելու դեպքում փաստաբանը նույնպես լքի դատական նիստերի դահլիճը, չմասնակցի որևէ դատավարական գործողության: **Պալատի խորհուրդը կարևոր է համարում սույն որոշմամբ փալ այն հարցի պարասխանը, թե՛ արդյոք դահլիճը լքելու (նիստին չմասնակցելու)**

վստահորդի հանձնարարությունը օրինական հանձնարարություն է, և արդյո՞ք փաստաբանը պարտավոր էր կատարել այդ հանձնարարությունը:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ համաձայն՝ պաշտպանը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախազահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ «Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.

(...)

Կանոնագրքի 3.1.6 կետի համաձայն՝ եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:

Նշված կանոնների համակարգային վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախազահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Փաստաբան Արա Ղարաբոգյանը խորհրդի նիստի ժամանակ պնդել է, որ անհնարին էր մասնակցել դատական նիստին, քանի որ ինքը չէր կարող դիրքորոշում արտահայտել առանց իր պաշտպանյալի դիրքորոշումը ճշտելու: Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Ա. Ղարաբոգյանը ոչինչ չի ձեռնարկել դատական նիստը հետաձգելու և իր վստահորդի դիրքորոշումը ճշտելու համար: Ավելին, չի օգտվել նախազահող դատավորի առաջարկից ժամանակ տրամադրելու պաշտպանին իր պաշտպանյալի հետ հնարավոր հարցերը նիստից դուրս ճշտելու համար:

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործով դատարանի դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ փաստաբան Արա Ղարաբոգյանը չի ունեցել, հետևաբար դիտավորությամբ այդպիսի (դահլիճը լքելու) վարքագիծ դրսևորելով

խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար...:

Նույն օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները (Արա Ղարազյոզյանը նախկինում կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել), գտնում է, որ փաստաբան Արա Ղարազյոզյանի նկատմամբ պետք է կիրառել տույժ՝ նկատողության ձևով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արա Ղարազյոզյանին (արտոնագիր թիվ 2041) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արա Ղարազյոզյանի (արտոնագիր թիվ 2041) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն սրանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հրանտ Անանյան